

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷԼԴԵՍՔՈ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/34 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Արամ Խաչատրյան համերգասրահի LED Էկրան իր համակարգով բաղկացած է՝ լեդ Էկրաններից, Էլեկտրական ճախարակից, Էլեկտրական ճախարակի կառավարման վահանակից, այլումինե կոնստրուկցիաներից և մալուխներից: Նշված լեդ Էկրանները, Էլեկտրական ճախարակը, Էլեկտրական ճախարակի կառավարման վահանակը, այլումինե կոնստրուկցիաները և մալուխները պետք է համապատասխանեն կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-1-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Լրակազմում նշված ապրանքների երաշխիքային ժամկետները՝ առնվազն 1 տարի: Լրակազմում նշված ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, համապատասխան մասնագետի հրահանգավորումը, ինչպես նաև ուղղահայաց բեռի հենակետային կետի հաշվարկումը և կցման կետերի պատրաստումը իրականացվում է Մատակարարի կողմից: Լրակազմում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում տրված են դրանց նվազագույն պահանջները (կամ առավելագույն պահանջները, եթե խոսքը գնում է բացասական ցուցանիշի մասին. բացասական ցուցանիշները նշված են մեկ աստղանիշով՝ «*»): Իսկ եթե ցուցանիշը սահմանում է միջակայք, ապա առաջարկվող ապրանքը պետք է ներառի</p>

ցուցանիշի նշված միաջակայքը: Եթե ցուցանիշը նշված է երկու աստղանիշով՝ «\*\*», ապա ցուցանիշը պետք է պահպանվի նույնությամբ: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ, ինչպես նաև լինեն տարածված, այսինքն՝ տեխնոլոգիաները կիրառվեն 2-ից ավել արտադրողների կողմից: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել Գնորդի հետ՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին: Տեխնիկական բնութագրի մանրամասները կցված են Հավելված 1-ին





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО ЭЛДЕСКО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22400000000000000000-25/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	